

## Կարծիք

### ««ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

««ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի<sup>1</sup> վերաբերյալ նկատառումները ներկայացվում են ստորև.

1. Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ պարբերությունը, որի համաձայն՝ նշված հոդվածում սահմանված դեպքերում 14-18 տարեկան երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար տալիս է գրավոր համաձայնություն:

Նախագծին կից ներկայացված հիմնավորումներից պարզ է դառնում, որ նշված դրույթն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ պրակտիկայում այն գրեթե չի իրագործվում: Մասնավորապես՝ 14-16 տարեկան երեխաների ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հարցը, որպես կանոն, որոշում են ծնողները, և երեխայի համաձայնությունը ստանալը կրում է ձևական բնույթ:

Անկախ նշված դրույթի գործնականում կիրառման առանձնահատկությունից՝ պետք է նշել, որ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի<sup>2</sup> 12-րդ հոդվածի համաձայն՝ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար իրեն վերաբերող բոլոր դեպքերում ապահովվում է իր կարծիքն արտահայտելու իրավունք՝ վերջինիս տարիքին և հասունությանը համապատասխան: Այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ ներպետական օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով լսված լինել թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով:

Ավելին, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության (2013) «երեխայի լավագույն շահերը գնահատելիս հաշվի առնվող հանգամանքները» վերնագրով 1-ին կետի §53-ի համաձայն՝ ցանկացած որոշում, որտեղ հաշվի չի առնվում երեխայի կարծիքը կամ պատշաճ կշիռ չի տրվում այդ կարծիքին, հաշվի առնելով երեխայի տարիքը և հասունությունը, չի հարգում իրենց լավագույն շահերի որոշման գործընթացի վրա ազդելու երեխայի հնարավորությունը:

---

<sup>1</sup> Այսուհետ՝ Նախագիծ

<sup>2</sup> Այսուհետ՝ Կոնվենցիա

Միաժամանակ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան իրավունք ունի իր շահերը շոշափող ցանկացած հարց լուծելիս ունկնդիր լինելու հարցի քննությանը և արտահայտելու սեփական կարծիքը ընտանիքում, դատական և այլ մարմիններում:

Պետք է նշել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկներում, ինչպիսիք են՝ Ֆրանսիան<sup>3</sup>, Լիտվան<sup>4</sup>, Սլովակիան<sup>5</sup> և Վրաստանը<sup>6</sup>, և համապատասխան կարգավորումներ են սահմանվում քաղաքացիության ձեռքբերման գործընթացում երեխաների կարծիքը հաշվի առնելու և նրանց համաձայնությունը ստանալու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծով սահմանել այնպիսի կարգավորում, որը թույլ կտա ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու գործընթացում հաշվի առնել երեխայի կարծիքը՝ նրա տարիքին և հասունությանը համապատասխան, ինչպես նաև սահմանել նշված հոդվածում սահմանված դեպքերում 14-16 տարեկան երեխայի գրավոր համաձայնությունը ձեռք բերելու պահանջ:

2. Նախագծի տարբեր դրույթներում միևնույն իմաստով կիրառվում են երկու տարբեր տերմիններ՝ «մաս» և «պարբերություն»: Մասնավորապես, Նախագծի 2-րդ, 3-րդ և 5-րդ հոդվածներում կիրառվում է «մաս» տերմինը, իսկ 6-րդ և 7-րդ հոդվածներում՝ «պարբերություն» տերմինը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծում ապահովել տերմինների միատեսակ կիրառությունը:

3. Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետում առաջարկում ենք «4)» թիվը փոխարինել «3)» թվով:

## **Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ**

<sup>3</sup> Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրք, հոդված 21-11

<sup>4</sup> Լիտվայի «Քաղաքացիության մասին» օրենք, հոդված 27

<sup>5</sup> Սլովակիայի «Քաղաքացիության մասին» ակտ, § 8, կետ 11

<sup>6</sup> Վրաստանի «Վրաստանի քաղաքացիության մասին» հիմնական օրենք, հոդված 16